ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2013 թ. հունվարի 31 թիվ 10-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հունվարի 30-ի N 8-Ա որոշմամբ հաստատված հիմնական միջոցառումների պլանի 11.2.1 կետի պահանջները

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2013 թվականի փետրվարի 5-ին ժամը 09^{00}- 18^{00} Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի վարչական շենքում անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության կազմակերպումը և իրականացումը համաճարակի հանգեցնող ինֆեկցիոն հիվանդության ծագման դեպքում» թեմայով:
2. ՈՒսումնավարժությանը ընդգրկել՝
   1) մարզպետարանի ղեկավար կազմին,
   2) արտակարգ իրավիճակներում գործող մարզային մշտական հանձնաժողովին,
   3) Արագածոտնի մարզային փրկչարարական վարչությանը,
   4)արտակարգ իրավիճակներում գործող Աշտարակ քաղաքի մշտական հանձնաժողովին:
3. ՈՒսումնավարժության ղեկավար հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետը:
   ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ է հանդիսանում մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետը:
4. Հաստատել ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը համաձայն հավելվածի.
5. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) կազմել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի հաստատմանը,

2) ապահովել ուսումնավարժության ղեկավարման շտաբին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

Ժ/Պ

Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2013թ. հունվարի 31-ի թիվ 10 -Ա
կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

1. Շ.Շամիրյան - Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ՝ շտաբի պետ
2. Հ.Դարբինյան - Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, օպերատիվ բաժնի պետ փ/ծ փոխգնդապետ՝ շտաբի պետի տեղակալ
3. Ա.Հակոբյան - Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ փ/ծ փոխգնդապետ՝ շտաբի անդամ
4. Հ. Կարապետյան - Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, փ/ծ մայոր՝ շտաբի անդամ
5. Վ.Հարությունյան - Արագածոտնի մարզային փրկարարական վարչության օպերատիվ բաժնի հրահանգիչ փ/ծ ավագ լեյտենանտ՝ շտաբի անդամ
6. Է.Շամիրյան - Արագածոտնի մարզային փրկարարական վարչության օպերատիվ բաժնի հրահանգիչ փ/ծ ավագ լեյտենանտ՝ շտաբի անդամ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ